

Թիւեր գալիս է՝ օրհնելու և վերադառնալու, իսկ զէպ ի հարաւ կայ մի շուր սր ժողովրդի ասածին համաձայն սասաիկ խոր է: պարսիկների քաղաքի կործանման ժամանակ բնակիչքը իրենց ստացուածքը հուարելով այնտեղ են լիցրած և մինչև ցայժմ կենումէ: ասումեն շատ անգամ չի-բնէր են երևում հոգիներին և պահանջում են իրենց զոհ մի զոյգ ոչխար սպիտակ և սեաւ, որպէս զի բանան այդ խոր ջրի գուռը: բայց հոգիները վախենալով ցարդ՝ ոչ ոք չէ փորձած այդ փորձն անել, այժմ այդ աւերակներին Զիվչեա են ասում և եթէ շրնդունենք զա Ծիծեռն անուան ազճատոււմը, արդէն անունն իսկ ստուգումէ զայդ իբրև ճշմարտութիւն, որովհետև Զիւ- իբրև իբրև քիւրդերէն բառեր թարգմանուումէ - բռ-բռ-ի-ի և նոքա այդ հայ քաղաքին մօտիկ լինելով և ծանօթ անշուշտ հայ ասացուածներին՝ այդպէս են անուանել: բայց կանգ առնում, իմ գրչիս գեռ թողատրուած չէ Տարօնոյ բաղմամբիւ աւերակներին սովորութիւններին, ժողովրդական զգացմանց զէպ ի իւր կրօնը և ին մասերի վերայ խօսել: մանաւանդ որ շատ տեղեկութիւն իսկ չունիմ, և սրանով ևս բաւականանալով՝ առ այժմս կնքում եմ խօսքս:

Գեորգ. ճէմ. Գ. Գաս. Ալակ.

Կ. ՄԿՐՏՁԵԱՆ, ՄՇԵՅԻ.

Ըյս յօդուածը ևս կարդացուած է Մայր Աթոռոյս Գեորգեան ճեմարանի աշակերտաց զբախանական ժողովում:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռոյս Գեորգեան ճեմարանի սանուները ներկայ տարւոյս Զատիկի օրը շնորհ ունեցան Աղգիս Սրբազնասուրբ Հայրապետին ներկայանալ հետեւեալ ուղերձով:

ՈՒՂԵՐՁ

Ի ՅԵՆԱՏԱԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ,

ՆՈՐԻՆ ՎԵՆՓԱՌՈՒԹԵԱՆ

ԿԸՌՈՒՂԻՊՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳԵՍ Գ.

ՎԵՆՓԱՌ ՏԷՐ,

Էյս գերահարաչ սփռի այսօր բովանդակ արտաճոց, և խաւար թանձրամած՝ յոր բանական խարխափէր՝ հալածական ծածկի յաչաց յաներևուցիմս: Զի յարեաւ Տէր, և լոյս ծագեաց փրկիրաց՝ կանգնեալ յազմանակ գիրկվիրոյ ամենեցուն իշխանութեանց և պետութեանց, Յարեաւ Տէր:

անկաւ՝ մահ, խորտակեցան նիգ դժոխոց: Ար զխայթոց մահուն կարծեաց՝
 Տէրն Յարուցեալ՝ գոչէ զուարթ, արի՛ մարդ, անկեալդ խաւարի՝ ահա
 ժամ՝ յորում ոչ ևս ուրեք երբէք է խաւար: Օն ի լոյս զիմեա՛ երազ՝ հա-
 ւաք, յոյս, սէր կեանք յօրինենք քեզ յարութեան. կեանք, որ ձգի,
 երկայնի անդր ևս քան զգերեզման: Չայս յիշատակ վերակենցաղ կեն-
 դանութեան բերէ մեզ օրս յիշատակի Տեառն Յարութեան զարթնուլ ի
 քնոյ՝ ծնանել ի լոյս անմահութեան՝ յարութեան՝ ի լոյս յորում՝ որ
 անկաւն ի փառաց մարդ բանական՝ կանգնեցի ի նոր կեանս — յանժա՛հ
 պատկեր Աստուածեան: Երանի՛ ում՝ բանին միտք զգալ զլոյս յարու-
 թեան. նա՛ երանի՛ որում՝ բանայն զմիտս մանկանց սաաջնորդել ի լոյս
 կենաց, ի հաստատ յոյս յարութեան — յանմահ ի կեանս:

ԱԵՀԱՓԱՆ Տէր, զո՞ արդեօք քան զԱԵՏ Գլուխդ խնդրեցուք ի մեզ, որ
 զլոյս միայն երկնէք ի խորհուրդս Չեր, ջանալ ջանայք ի լոյս առաջնոր-
 դել զՏօտ Չեր վայրափառին, զի լուսով ծանիցեն զանձինս և ի միութիւն
 կենաց գայցեն. ի գիտութիւն սնուցանէք զօրդիս Չեր. ի գիտութիւն որ
 զխաւար հալածէ յամենայն բանական մտաց, հետազօտեալ ի ծածուկս
 բնութեան զամենայն հանգամանս կենաց՝ ըստ կատարեալ բանականու-
 թեան, յորում միայն արութիւն փոխանակ զվատութիւն ծուլութեան,
 և լոյս բանական զխաբեպատիր ստուերս զգայական: Սնուցանէք զօրդիս
 Չեր ի գիտութիւն, և ի բարոյականութիւն, առանց որոց կորեան ազգք
 և կորնչին:

Առ որ, ԱԵՀԱՓԱՆ Տէր, բացէք զտաճարս լուսոյ, որոյ սանունքս ահա
 մերձեալ կամք առաջի վե՛հ Գլխոյդ ցուցանել զերախտագիտութիւնս, ոչ
 ի ձեռն ունայն և անցաւոր նուիրաց՝ այլ պատարագ՝ զիրաքանչիւր
 զիրտ և զգացումն մատուցանելով Տեառնդ, Միանգամայն մաղթանս
 ջերմ՝ վերառաքելով առ Յարուցեալն Յարուցիչ՝ երկարել զթիւ կենաց
 Հօրդ Մերոյ ի յարութիւն բովանդակ ազգիս ի նոր կեանս լուսոյ: Եւ
 Դուք, Հայր, կարկանդակք զաջ Չեր յօրհնել զիմեանս Չեր, զորս
 ստացայրդ երազարայլ ևս զիմել ի լոյսն փրկաւետ ըստ ինամոցդ:

Ի Գիւնց հասցելն արիւնքոց Գեղեցեան ձեռքով:

ԱՇԱԿԵՐՏ Զ. Գ.Ա.Ս. Թ. ՊԱԼԵԱՆ.

Ի 1881 - 2, Ապրիլի 12:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ.

Մոսկվայի Հայ ժողովրդականք մի փառաւոր գործ կատարեցին իբրև առ
 հաւատչեայ երախտագիտութեան: Նորա Օգոստափառ Աղէքսանդր Բ. Վայ-
 սեր կսկծալի մահուան ամենատխուր արկածի օրից, եօթնօրեայ հոգեհան-
 գատեան տխրաշուք բարեմաղթութիւնները կատարելիս յորդ արտասուօք
 ցօղեցին Աստուծոյ տաճարը և ապա որոշեցին պատրաստել մի մեծագին